Գևորգյան Ճեմարան
Էլ. պարբերական

Gevorkian Seminary
E - Newsletter

Գ Տարի, թիվ 12,
2018 թ. մայիս Ա




**«Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է մեր քարոզությունը, ի զուր է և ձեր հավատքը»:**

(Ա Կորնթ.15:14)

## ՆԱՀԱՏԱԿԱՑ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Ապրիլի 24-ին Մայր Տաճարում մատուցվեց պատարագ՝ նվիրված ցեղասպանության սբ. նահատակների հիշատակին: Պատարագի դպրաց բաժինը կատարեց ԳՀՃ երգչախումբը՝ ղեկավարությամբ բրշ. Արթուր սրկ. Վարդանյանի: Պատարագի ավարտին կատարվեց սուրբ նահատակների ոգեկոչման արարողություն ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի մոտ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՔԼ ՍԹՈՈՒՆԻ ՀԵՏ

Ապրիլի 16-ին ԳՀՃ Կոմիտասյան սրահում ճեմարանի սաների հետ հանդիպեց Իսրայելից ժամանած անվանի հայագետ, Հրեական համալսարանին կից հայագիտական ամբիոնի հիմնադիր և երկարամյա ղեկավար, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Մայքլ Սթոունը:

Նա ճեմարանականների հետ խոսեց հայերեն Աստվածաշնչի կանոնական և ոչ կանոնական գրքերի մասին:

«Շողակաթ» հեռուստատեսությունը երաժշտական անդրադարձ կատարեց Ճեմարանի Զ լսարանի սան Նարեկ սարկավագ Կիրակոսյանին: «Ստեղծագործելը մարդուն տրված ամենամեծ պարգևն է, ինքնադրսևորվելու և իրեն ճանաչելու հնարավորություն»,- հաղորդման ընթացքում ասաց Նարեկ սարկավագը:

## ՏԵՍՉԻ ԱՅՑԸ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 12-ին ԳՀՃ Տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը ՀԳՄ նախագահ տիար Էդուարդ Միլիտոնյանի հրավերով ներկա գտնվեց ՀՀ Գրողների միությունում Սփյուռքահայ հայագիր և օտարագիր գրողների 6-րդ համաժողովի նյութերի ժողովածուի շնորհանդեսին: Ժողովածուում ի թիվ այլ նյութերի տեղ է գտել նաև Հայր Սուրբի խոսքակնարկը գրականության վերազարթոնքի կարևորության մասին:

## ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

Ապրիլի 16-ին տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային 5-րդ նստաշրջանը, որին մասնակցեցին նաև ԳՀՃ Ե լսարանի սան Եղիշե սրկ. Սարգսյանը և Զ լսարանի սան Զաքարա սրկ. Թադևոսյանը: Գիտաժողովը նվիրված էր Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 100-ամյակին: ԳՀՃ Զ լսարանի սան Զաքարա սարկավագը ներկայացրեց «Հայ Առաքելական Եկեղեցին Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920)», իսկ Ե լսարանի սան Եղիշե սարկավագը՝ «Գևորգ Ե Վշտալի կաթողիկոսի դերն ու գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության կերտման և կայացման գործում» թեմայով զեկուցում:

Ապրիլի 12-ին տեղի ունեցավ ԳՀՃ միջլսարանային ֆուտբոլային եզրափակիչ հանդիպումը Գ և Զ լսարանների միջև: Խաղը 5-3 հաշվով հաղթեցին Զ լսարանի սաները:

# ԿՅԱՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՋ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկաբեր խոսքին հնազանդությունը մեզ համար ճանապարհ է բացում դեպի փրկություն և հավիտենական կյանք, ինչպես որ Քրիստոս Հովհաննու ավետարանում հայտնում է. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը» (ԺԴ 6): Մարդը վայելում է հավիտենական կյանքի երանությունը դեռ այս կյանքում՝ սկսած այն ժամանակից, երբ հանձն է առնում իր կյանքում առաջին և ամենամեծ տեղում ճանաչել Քրիստոսին: Այլ կերպ ասած՝ այդպիսով մարդն իր կյանքը հանձնում է Քրիստոսին և սկսում ապրել Նրա պատվիրանների համաձայն, որը թեև դժվարություններով լի է, սակայն առատ է օրհնություններով և շնորհներով. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ... որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մտթ. ԺԱ 28,30): Եվ ահա այդ ճանապարհով Քրիստոս աստիճանաբար սկսում է բնակվել մարդու մեջ, բայց և այնպես միշտ սպասելով, որ մարդն ինքը ջանք գործադրի Տիրոջ բարեհաճությունը շահելու համար, ըստ Սուրբ Գրոց այն խոսքի, որն ասում է. «Ես ու՞մ եմ նայելու, եթե ոչ հեզերին և սրտով խոնարհներին» (Ես. ԿԶ 2): Քրիստոս Ինքը լինելով Աստված՝ Իր անձը խոնարհեցրեց և ծառայի կերպարանք առավ հանուն ողջ մարդկության, խոնարհաբար ծնվեց և Իր խոսքով ու գործով ամենքին սեր և նվիրում ցույց տվեց: Հետևաբար, մենք կարիք ունենք խոնարհեցնելու մեր անձը, որպեսզի Քրիստոս բնակվի այնտեղ և առաջնորդի մեզ դեպի փրկություն, որի համար պետք է աստվածային շնորհի ներգործությունը, քանի որ «առանց Իրեն ոչինչ անել չենք կարող» (հմմտ. Հովհ. ԺԵ 5): Ապա ուրեմն, այս աշխարհում Նրա պատվիրանները պահելու, տեսակ-տեսակ նեղություններին ու վշտերին համբերելու և ընկած վիճակից կրկին ոտքի կանգնելու համար մենք կարիք ունենք Քրիստոսի ողորմածության, որը ձեռք է բերվում խոնարհությամբ ու հեզությամբ: Այդ ոգով էին առաջնորդվում նաև առաքյալները, երբ իրենց քարոզության համար կրում էին բազմաթիվ չարչարանքներ. «Դրա համար գոհունակությամբ համակերպվում եմ տկարություններին, նախատինքներին, վշտերին, հալածանքներին ու նեղություններին՝ Քրիստոսի համար. որովհետև երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կոր.ԺԲ 14):

Աղոթքը խոնարհության ծնողն է, քանի որ աղոթքով խոստովանում ենք մեր անձի տկարությունները, գիտակցում ենք մեր մեղսալից վիճակը և այդպիսով տեսնում ենք, թե որքան հեռացած ենք Աստծուց: Այս բոլորը մեր մեջ կարծես բողոք են բարձրացնում մեր անձի դեմ, բայց և մղում են մեզ խոնարհեցնելու մեր անձը, որպեսզի հարության լույսով լուսավորված՝ ապրենք մեր կյանքը քրիստոնեական արժեքներին համապատասխան, որով էլ կրկին արժանանանք Տիրոջ քաղցր գութին ու ողորմությանը:

**ՊԱՏՐԱՍՏԵՑ ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ՊԱՊԻԿՅԱՆԸ**

# ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱՅԻ ԱՊՐՈՒՄ

Յուրաքանչյուր անձ, սկսած իր ծննդյան օրվանից, դաստիարակվում և կրթվում է որոշակի գաղափարախոսությամբ և ձևավորում է ապրելու վերաբերյալ իր աշխարհայացքը: Մարդը կենսագործում է ապրելով: Ապրել բառը տվյալ համատեքստում բացատրվում է առաջին իմաստով որպես գոյություն ունեցող՝ մտածող, հավատացող և զգացող, երկրորդ՝ իր կյանքի ընթացքում գործունեություն իրականացնող, երրորդ՝ ավելի խորքային իմաստն այն է, որ մարդն իր ամբողջ էությամբ ներգրավվում և տրվում է թե՛ իր գոյությանը և թե՛ այդ գոյության համար իրականացվող գաղափարական և ֆիզիկական գործունեությանը: Եկեղեցու հավատացյալը, որպես ձևավորված անձ, իր համար ունի քրիստոնեական ընկալումը կյանքի նկատմամբ, որն ապրել բառի երեք իմաստների ամբողջությունն է. այն է, որ քրիստոնյան գիտի իր գոյության մասին, որ արարվել է Աստծու պատկերով և նմանությամբ (Ծննդ. Ա 26), որը պետք է հասցվի բանականության, հավատի և զգայական մակարդակի: Քրիստոնյա հավատացյալն իր կյանքի ընթացքում ապրում է և գործում համաձայն Քրիստոսի տրված պատգամների և Նրա կյանքի օրինակի, և վերջապես՝ քրիստոնյան իր ամբողջ էությամբ հավատալով, նվիրվելով և տրվելով իր գոյության իմաստին, այն է՝ հասնել փրկության, վայելել աստվածային ներկայության մշտամնա վիճակը, իր կյանքն ապրում է՝ իրականացնելով գաղափարական և ֆիզիկական գործունեությունը: Այս կերպ եկեղեցու անդամը հավատում, մտածում, փորձում է զգալ և ապրել Տիրոջ Հարության իրականությունը:

Պետք է շեշտել, որ Հարության իրականությունը միմիայն չպիտի ընդունել և մեկնաբանել որպես ապագայում կատարվող իրականություն: Հիսուս Քրիստոսի հարությունը անցյալի, ներկայի և ապագայի իրողություն է. «այժմ և միշտ և հաւիտեանս. ամեն…» (Մտթ. Զ 13):

Պետք է նշել, որ քրիստոնեական մարդաբանության համաձայն՝ ինչպես Աստվածամարդը՝ Հիսուս Քրիստոսը, Իր աստվածությամբ կյանքն է (Հովհ. 11:25), նույն կերպ և չէր կարող հարություն չտալ իր մահացած մարմնին: Իր մարմնի հարությունն իրականությունն է մարդկային ապականացու և մեղավոր մարմնի հարության: Քրիստոս հարություն է տալիս մարմնին: Սա իրողությունն է այն բանի, որ Աստված մեզ համար դուռ է բացում մեր նախնական վիճակի վերականգնման համար: Նա Իր հոգու մասին ասում է, որ «Իշխանություն ունի տալու այն և իշխանություն ունի կրկին այն ընդունելու» (Հովհ. Ժ 18): Հիսուս Քրիստոսի հարությունն այլևս մարդկային մարմինը և, ընդհանրապես, մարդկային էությանը կապում է հավիտենականությանը: Հիսուս Քրիստոսի հարությամբ մարդկային բնությունը միավորվեց աստվածայինին և հարություն առավ՝ մարդկային բնության և մարմնի համար հնարավորություն ստեղծելով միավորվելու աստվածայինին: Վերը նշեցինք, որ հարությունը միայն ապագայի իրողություն չէ, այլ նաև ներկայի: Իսկ ներկա լինել նշանակում է ապրել, գոյություն ունենալ: Այս իմաստով հարություն բառը անհերքելիորեն նշանակում է ապրել և գոյություն ունենալ: Մեղսագործության արդյունքում մարդը զրկվել էր դրախտում ապրելու շնորհից (Գ:1-24), այսինքն՝ նա հեռացած էր Աստծուց: Քրիստոսի բերած հարությունն Աստծու հետ ապրելու, գոյություն ունենալու վերականգնումն է: Յուրաքանչյուր քրիստոնյա այս իմաստով պետք է փորձի իր ներկա կյանքում ապրել հարության իրողությունը: Մարդը, ճանաչելով իր բնությունը բացասական և դրական կողմերով, պիտի գիտակցի, որ այն հատկություն ունի վերցնելու այն շնորհը, որը տրվում է իրեն և որը ձեռք է բերվում աշխատանքի արդյունքում: Եթե անձը չի ապրում Ավետարանական խոսքով, չի դարձնում այն իր համար աշխարհայացք, ապա նրա մեջ նվազում, խամրում, ապա անհետանում են թե՛ այն շնորհները, որոնք տրված էին, և թե՛ նրանք, որոնք ձեռք էր բերել աշխատանքի արդյունքում: Այս գիտակցումով ապրող անձն պիտի իրենը դարձնի հարության շնորհը, ապրի դրանով որպես ներկա իրականություն, որը շարունակական, այսինքն՝ ապառնի բնույթ է կրելու նրա կենսագործության ընթացքում:

**ՊԱՏՐԱՍՏԵՑ ԻՇԽԱՆ ՍՐԿ. ՍԱՀԱԿՅԱՆԸ**



**«Եվ Հիսուս մոտենալով խոսեց նրանց հետ ու ասաց. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք ուրեմն աշակե՛րտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ պատվիրեցի ձեզ: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»**

**(Մատթ. 28:16-20):**

## ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՆԵՐԸ

Քրիստոնեության վաղ շրջանում առաջինը և հիմնականը առաքյալներն էին, որ պնդում էին Քրիստոսի փառավոր Հարության վերաբերյալ իրենց ականատես լինելը: Խաչելությունից միայն օրեր անց, երբ 2 թեկնածուներ էին առաջադրված, Հուդայի դավաճանությունից հետո ազատ տեղը լրացնելու համար, նրանց հիմնական որակավորումը պայմանավորված էր ինչպես մահվանից առաջ, այնպես էլ հետո Քրիստոսին անձնապես ճանաչելու և արտաքին աշխարհի առաջ Քրիստոսի մասին ականատեսի աչքերով վկայելու հանգամանքով (Գործք Ա 22): Շատ քիչ օրեր անց սբ. Պետրոսը, խոսելով առաջին քրիստոնեական քարոզի ժամանակ, շարունակում է միևնույն պնդումը. «Սույն այս Հիսուսին Աստված հարություն տվեց, որի վկաներն ենք մենք ամենքս» (Գործք Բ 32): Կորնթացիներին ուղղված առաջին թղթի մեջ Պողոս առաքյալն իր պնդումը նույն հիմքի վրա է կատարում. «Չէ՞ որ ես էլ առաքյալ եմ, չտեսա՞ ես Տեր Հիսուսին»:

Ինչպես այս որակավորումներն են փաստում, քրիստոնեություն քարոզելը հիմնականում ենթադրում էր քարոզել Հարությունը: Հարության ավետիսը առաքյալների քարոզության մեջ այնքան առաջնային էր, որ Աթենքում մարդիկ, Պողոսի քարոզից որոշ կտորներ լսելով, տպավորություն ստացան, որ կարծես նա խոսում է 2 նոր աստվածների մասին՝ Հիսուսի և Հարության (Գործք ԺԷ 18): Գործքում ներկայացված ցանկացած քրիստոնեական քարոզի առանցքային գաղափարը Հարությունն է:

«Ավետարանը» կամ բարի լուրը, որ քրիստոնյաները տարածում էին, Հարությունն էր և դրա հետևանքները: Ինչ որ մենք այսօր կոչում ենք Ավետարան՝ մեր Տիրոջ կյանքի և մահվան որոշ պատմությունները, կազմվել է ավելի ուշ, Քրիստոսի հարության ավետիսը արդեն ընդունածների համար: Ավետարանի ընկալման մեջ Հարության հրաշքը և այդ հրաշքի աստվածաբանությունը առաջին տեղում է դրվում, իսկ կենսագրությունը գալիս է դրանից հետո որպես դրա մեկնաբանություն: Քրիստոսի խոսքերը նույնպես Ավետարանի առանցք չեն կազմում Հարության համեմատությամբ: Ավելի թերարժեք բան լինել չի կարող, քան Ավետարանից Քրիստոսի մասնավոր խոսքերը վերցնելը և դրանք որպես Ավետարանի կենտրոնական առանցք ներկայացնելը: Քրիստոսի մասնավոր քարոզները, կենսական կարևորություն լինելով, քրիստոնեական քարոզչության հիմք չեն: Քրիստոնեության վերաբերյալ առաջին փաստը պատմության մեջ մի խումբ մարդկանց վկայությունն էր այն մասին, որ իրենք տեսել են Հարությունը: Եթե նրանք մահանային առանց հիմք դառնալու ուրիշների հավատքի, ոչ մի ավետարան էլ երբեք չէր գրվի:

Շատ կարևոր է հասկանալ, թե այս մարդիկ ինչ նկատի ունեին: Երբ արդի հեղինակները խոսում են հարության մասին, նրանք հիմնականում նկատի ունեն այն պահը, երբ գերեզմանը դատարկ գտնվեց, և Քրիստոս երևաց գերեզմանից քիչ հեռու: Քրիստոնյա ջատագովները այդ պահը փորձում են հաստատել, իսկ անհավատները հիմնականում փորձում են հերքել: Պնդելով, թե տեսել են Քրիստոսի Հարությունը, նրանք կոնկրետ նկատի չունեին, թե տեսել են այդ: Նրանցից որոշները տեսել էին, որոշները՝ ոչ: Այլևս դա մեծ նշանակություն չուներ, քան հարուցյալ Քրիստոսի հայտնվելու կերպերից որևէ մեկը տեսնելը: Նրանք պնդում էին, որ Քրիստոսի Հարությանը հետևած 6 կամ 7 շաբաթների ընթացքում մեկ կամ մի քանի անգամներ հանդիպել են նրան: Երբեմն նրանք մենակ էին, երբ տեղի էր ունենում այս հանդիպումը, մեկ այլ դեպքում աշակերտները միասին, իսկ վերջում նա հայտնվեց, երբ հինգ հարյուրը միասին էին: «Հարությունը», որի մասին վկայում էին նրանք, փաստացի ոչ թե մեռելներից հարություն առնելու գործողությունն էր, այլ հարուցյալ կարգավիճակը:

**ՊԱՏՐԱՍՏԵՑ ԱՐՍԵՆ ՍՐԿ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ**

(ըստ՝ C.S. Lewis “Miracle”)

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Անտոնի Սուրոժսկի)

Ինչպե՞ս պետք է խոստովանել: Ամենաուղիղ, ամենաորոշիչ պատասխանն այս հարցին կարող է լինել այսպիսին. խոստովանիր այնպե՛ս, ասես քո մահվան ժամն է, խոստովանիր այնպե՛ս, ասես երկրային քո ամբողջ կյանքի ընթացքում վերջին անգամն է, որ դու կարող ես ապաշխարել՝ նախքան հավերժություն անցնելն ու Աստծո դատաստանի առաջ կանգնելը, ասես վերջին ակնթարթն է, երբ դու կարող ես երկարատև կյանքի անարդարության և մեղքի ծանրությունը թոթափել ուսերիցդ, որպեսզի ազատ մուտք գործես Աստծո արքայություն:



Այն ժամանակ՝ շուրջ 2000 տարի առաջ, Քրիստոս եկավ աշխարհ, ապրեց մեր մեջ, եղավ մեզնից մեկը: Փրկիչը եկավ մեզ փնտրելու, մեզ հույս տալու, հավատացնելու մեզ աստվածային սիրուն, հավատացնելու, որ ամեն ինչ հնարավոր է, եթե միայն մենք հավատանք Նրան և ինքներս մեզ... Բայց հիմա գալիս է ժամանակը, երբ Նա կկանգնի մեր առաջ՝ կա՛մ մեր մահվան, կա՛մ վերջին դատաստանի ժամին: Եվ այդ ժամանակ Նա պետք է կանգնի մեր առաջ որպես Խաչյալ Քրիստոս՝ մեխերով ծակծկված ոտքերով ու ձեռքերով, վիրավոր ճակատի փշերով, և մենք կնայենք Նրան ու կտեսնենք, որ Նա խաչվել է, քանի որ մենք մեղանչել ենք: Նա մահացել է, քանի որ մենք արժանացել ենք մահվան դատապարտությանը, քանի որ մենք արժանի՛ էինք Աստծուց հավիտենական դատապարտության: Նա եկավ մեզ մոտ, դարձավ մեզնից մեկը, ապրեց մեր մեջ և մեռավ մեր պատճառով: Ի՞նչ կասենք մենք այդ ժամանակ: Դատաստանն այն չի լինելու, որ Նա դատապարտի մեզ: Դատաստանը լինելու է այն, որ մենք տեսնելու ենք Նրան, ում մենք սպանեցինք մեր մեղքերով և ով կանգնելու է մեր առաջ Իր ողջ սիրով… Ահա ա՛յդ սարսափից խույս տալու համար մենք պետք է ամեն խոստովանության առաջ կանգնենք այնպես, ասես դա մեր մահվանը նախորդող ժամն է, հույսի վերժին ակնթարթը՝ այն տեսնելուց առաջ:

Եվ ահա հարց է առաջանում. ինչպե՞ս պատրաստվել խոստովանությանը, ինչպիսի՞ մեղքեր «մատուցել» Աստծուն: Առաջին հերթին յուրաքանչյուր խոստովանություն առավելագույնս պետք է լինի անձնական, իմը և ո՛չ ընդհանուր. իմ սեփականը, քանի որ որոշվում է իմ սեփական ճակատագիրը: Եվ այդ պատճառով հենց այդտեղից պետք է սկսել, որքան էլ որ անկատար լինի իմ դատաստանն ինքս իմ նկատմամբ: Պետք է սկսել՝ ինքդ քեզ հարց ուղղելով. «Ինչի՞ց եմ ես ամաչում իմ կյանքում, ի՞նչ եմ ես ցանկանում թաքցնել Աստծուց և ի՞նչ եմ ցանկանում թաքցնել իմ սեփական խղճի դատաստանից, ինչի՞ց եմ ես վախենում»: Եվ այդ հարցը լուծելը միշտ չէ որ դյուրին է, քանի որ մենք այնքան հաճախ ենք ընտելացել սեփական արդար դատաստանից թաքնվելուն, որ երբ մենք նայում ենք ինքներս մեզ՝ մեր մեջ ճշմարտություն գտնելու հույսով և մտադրությամբ, դա մեզ համար դառնում է չափազանց դժվար:

Եվ վերջապես, մենք կարող ենք անդրադառնալ ավետարանական դատաստանին ու հարց տալ ինքներս մեզ. «Ինչպե՞ս կդատեր մեզ Փրկիչը, եթե նայեր (Նա, ամեն դեպքում, հենց այդպես էլ անում է) մեր կյանքին»: Ինքներդ ձեզ տվե՛ք այդ հարցերը և դուք կտեսնեք, որ ձեր խոստովանությունն արդեն կլինի լուրջ ու խոհուն, և որ այլևս ստիպված չեք լինի խոստովանության տանել այն ունայնությունը, այն մանկական, վաղուց վերացած թոթովանքը, որը հաճախ լսում ենք: Եվ մի՛ ներգրավեք այլ մարդկանց. դուք եկել եք խոստովանելու ձե՛ր և ո՛չ թե ուրիշի մեղքերը: Մեղքի հանգամանքները նշանակություն ունեն, եթե միայն դրանք երանգավորում են ձեր մեղքը և պատասխանատվությունը, իսկ պատմությունն այն մասին, թե ինչ է եղել, ինչու և ինչպես, ո՛չ մի կապ չունի խոստովանության հետ: Դա միայն թուլացնում է ձեր մեջ մեղքի գիտակցումն ու ապաշխարության ոգին:

Եթե մենք այդպես ուշադիր դիտենք մեզ այդ իրադրությունների ենթախորքում, պատվիրաններից ու Քրիստոսի խոսքերից յուրաքանչյուրում, ապա շուտով մեզ համար կբացահայտվի մեր սեփական կերպարը, հասկանալի կդառնա, թե ինչպիսինն ենք մենք, և երբ մենք գնանք խոստովանության, մեզ համար պարզ կլինի ո՛չ միայն մեր խղճի, ո՛չ միայն մարդկային, այլև աստվածային դատաստանը, բայց ոչ թե միայն որպես սարսափ, ոչ թե որպես դատապարտություն, այլ որպես մեր մեջ եղող ողջ ճանապարհի ու բոլոր հնարավորությունների հայտնություն: Հնարավորություն կա ամեն ակնթարթ կանգ առնելու և հավիտյան լինելու այն պայծառ, լուսավոր ու ցնծացող հոգիներով մարդկանց հետ (ինչպիսին որ երբեմն մենք լինում ենք) և հնարավորություն հանուն Քրիստոսի, հանուն Աստծո, հանուն մարդկանց և հանուն մեր սեփական փրկության հաղթահարելու ինքներս մեր մեջ այն, ինչ խորթ է Աստծուն, այն, ինչ մահացու է, այն, ինչով չկա ճանապարհ դեպի Երկնքի արքայություն: Ամեն:

**ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՎՈՐԳ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ**

## ՍԱՐԿԱՎԱԳ. ՊԱՏՄԱԾԻՍԱԿԱՆ ՈՒ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Նմանապես և սարկավագները թող լինեն պարկեշտ, ոչ երկդիմի խոսող,
ոչ գինեսեր, ոչ շահամոլ, այլ թող պահեն հավատի խորհուրդը մաքուր խղճով:
Նախ իրենք թող փորձի ենթարկվեն և եթե անմեղադրելի գտնվեն, ապա պաշտոն կատարեն...
Սարկավագները թող մեկ կնոջ մարդ լինեն, իրենց որդիներին և իրենց տները լավ կառավարեն»:
(Ա Տիմ. Գ 8–12)

Հայոց նվիրապետական աթոռի վեցերորդ աստիճանը սարկավագությունն է, որը համարվում է եկեղեցականի հոգևոր առաջին աստիճանը: Այն ձեռք է բերվում եպիսկոպոսի կողմից ձեռնադրության միջոցով, սակայն սարկավագին օծում չի շնորհվում, ուստի նա իրավասու չէ խորհրդակատարելու: Սարկավագը ծիսակատարության ժամանակ ձախ ուսին կրում է ուրար՝ ի նշան Քրիստոսի լուծի կեսը կրելու պատրաստակամության: Պատարագի ժամանակ հագնում են նաև շապիկ՝ իբրև Քրիստոսի անարատ ծնունդը և հարությունն ավետող հրեշտակի սպիտակ հանդերձի խորհրդանշան.

շապիկ (պահլ. Íapõk «նուիրական շապիկ զրադաշտականաց») նախնական իմաստի հիման վրա էլ առաջացել է ժամանակակից կրոնաեկեղեցական բովանդակությունը: Թեև Ուղղափառ եկեղեցում մինչ այսօր կիրառվում է սարկավագին «հայր» կամ «հայր սարկավագ» կոչելու ավանդույթը, սակայն Հայ եկեղեցում սարկավագին բարեշնորհ կոչելուց զատ հատուկ ողջունելու ձև չկա: Վաղ շրջանի ոչ կանոնական գրականության մեջ առանձնանում է սարկավագների դասը, որոնց պարտականությունները, սակայն, չեն մանրամասնվում: Ավելի ուշ շրջանում ստեղծված գրականության մեջ երևում է, որ առաքելական ժամանակաշրջանում, որպես քրիստոնեական ծառայության մի մաս, սարկավագների պարտականությունն էր հիվանդներին խնամելը: Սարկավագը մասնակցում էր նաև եկեղեցական վարչական աշխատանքներին: Այս աստիճանը բնորոշ չէ միայն մեր եկեղեցուն: Հռոմեական Եկեղեցում սարկավագի ծառայությունը բնութագրվում է որպես՝ 1. քարոզչություն, 2.Պատարագին մասնակցություն, 3.բարեգործություն: Սարկավագները կարող են ղեկավարել հուղարկավորության արարողությունները, ԶԼՄ-ով քարոզել Քրիստոսի փրկաբեր խորհուրդը: Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին բացառիկ դեպքերում թույլատրում է անգամ սարկավագներին Ս. Մկրտության խորհուրդը կատարել: Եթե Ընդհանրական Եկեղեցում ընդունված է եղել սարկավագների կողմից արված մկրտությունը, ինչպիսի օրինակներ գտնում ենք Գործք Առաքելոցում, երբ Փիլիպպոսը մկրտում էր սամարացիներին, Սիմոն մոգին և Կանդակա թագուհու ներքինուն, հետագայում այն վերապահվել է միայն օծում ունեցող հոգևորականներին: Այս ամենն իր արձագանքն է գտել 335 թ. Երուսաղեմի Մակար հայրապետի՝ Վրթանես կաթողիկոսին հղված նամակում, ինչպես նաև մի շարք կանոնական որոշումներում (ս. Սահակ Պարթևի 17-րդ կանոն, 768 թ. Պարտավի ժողովի 20-րդ կանոն):

Ըստ էության՝ սարկավագը եկեղեցու ծառայող ու սեղանի սպասավորող է, քանզի նրան ձեռնադրվելիս շնորհվում է նաև Պատարագների ժամանակ Ավետարան ընթերցելու ու բուրվառով եկեղեցին խնկարկելու արտոնություններ: Սարկավագներն ընտրվում էին համայնքի ժողովներում (Գործ. Զ 3) և ծառայության էին նշանակվում առաքյալների ձեռնադրությամբ (Գործ. Զ 6): Բոլոր նրանք, ովքեր իրենց ծառայությունն էին բերում նոր կազմավորվող եկեղեցուն, իրավմամբ համարվում էին սարկավագներ՝ ծառայողներ, ինչպես Կորնթոսի Կենքրեա նավահանգստային համայնքի անդամ Փիբեն, որի մասին Հեթանոսաց առաքյալ Պողոսը հիշատակում է Հռոմեացիներին ուղղված թղթում (Հռոմ. ԺԶ 1): Տակավին հելլենիստական ժամանակաշրջանում այս բառով էին կոչում նաև տաճարում որևէ կուռքի ծառայողներին: Նոր Կտակարանում դրանք թագավորի (Մտթ. ԻԲ 13) կամ Աստծո ծառաներն (Ա Թես. Գ 2) էին: Պողոսը Եպափրասին Քրիստոսի ծառա (դիակոնոս) է անվանում, իսկ իրեն՝ Ավետարանի և եկեղեցու սպասավոր

(Կող. Ա 7, 23, 25): Մյուսները Պողոսին ծառայություն են (դիակոնիա) մատուցում (Գործ. ԺԹ 22, Կող. Դ 7, Եփ. Զ 21), սակայն բնագրից հետևում է, որ նրանք իր օգնականներն են եղել ավետարանման գործում: Անգամ Քրիստոսի ծառայությունները հունարեն բնագրում կոչվում են դիակոնիա. Քրիստոս եկել էր ծառայելու և որպես օրինակ թողնելու իր անվանակից քրիստոնյաներին, այդու՝ սարկավագությունը դառնում է Քրիստոսի Եկեղեցու գլխավոր առանձնահատկություններից մեկը:

Սարկավագ բառը, որի ծագումը, ըստ Գ.Ջահուկյանի, անհայտ է, համապատասխանում է հուն. Διάκονος («ծառա», «սպասավոր») բառին: Գրական ճանապարհով հունարենից կատարված փոխառությունների զրեթե կեսը ժամանակի ընթացքում մոռացվել է և միայն մի մասն է գործածական արդի հայերենում. օրինակ՝ ազապ, եկեղեցի, եմիփորոն, երեց, եպիսկոպոս, զմուռս, յուղաբեր, կաթողիկոս, կիրակի, կոնդակ, կոնքեռ, հերետիկոս, մյուռոն, հինունք, նափորտ, ուրար, պապ, պատրիարք, տաղանդ, տոմար, փիլոն և այլն: Եկեղեցականներին նախկինում տրվող հունարեն դիակոն և իպոդիակոն պատվանունների փոխարեն գործածական են դառնում սարկավագ և կիսասարկավագ անվանումները:

Վաղ եկեղեցում հիշատակվում են նաև կին սպասավորողները՝ սարկավագուհիները /հուն.՝ Διακόνισσα, ռուս.՝ диакониса/, որոնց մասին հիշատակություններ կան Հին Արևելքի պահպանված վավերագրերում. սկսած 4-րդ դարից՝ սարկավագուհիները հիշատակվում են կանոնական, ծիսական, վարքաբանական աղբյուրներում նույնպես: Եթե մինչ այդ գրավոր աղբյուրներում հազվադեպ էին διακόνισσα /իգական սեռով/ գործածումները, ապա դրանք սկսում են կիրառվել ավելի հաճախ: Նրանց առաքելության մեջ գլխավորը եղել է չափահաս կանանց մկրտության պատրաստելն ու արարողությունների ժամանակ խորհրդակատար քահանային օգնելը: Դրանից զատ նրանք կարիքավոր կանանց նվիրատվություն էին բաշխում, այցելություն կատարում հղի և հիվանդ կանանց: Նրանք կարող էին աղոթք անել, մինչև անգամ օրհնել, սակայն չունեին քահանայական իշխանություն: Պլինիոս Կրտսերի՝ Տրայանոսին ուղղված նամակում նշվում են երկու սարկավագուհիներ, իսկ Դիդախեում, որպես եկեղեցական աստիճանակարգություն ունեցող կանայք, հիշատակվում են կույսերն ու այրիները: 380-ական թթ. կազմված «Առաքելական սահմանադրություններում» արդեն հստակ սահմազատված է սարկավագի և սարկավագուհու դերակատարումը: Վաղ Եկեղեցու նշանավոր սարկավագուհիներից էր հռոմեացի ազնվական ընտանիքի զավակ սբ. Տատյանան, որի աղոթքով քանդվեց Ապոլլոնի տաճարը:

Սարկավագ բառով կազմությունները քիչ չեն բառարաններում.

1. Ավանդատանը համարժեք գործածական է եղել **սարկավագատուն** բառը, որը ծառայել է որպես եկեղեցու սուրբ ավանդների պահ տալու վայր, սակայն ընկալվել է սկզբնապես ձախակողմյան ավանդատուն իմաստով, քանի որ աջակողմյանը նախատեսված է եղել որպես կա՛մ ճգնարան, կա՛մ մոմասրահ: Սարկավագների հավաքվելու վայրը Ստ. Մալխասյանցը հիշատակվում է նաև սարկավագանոց, սարկավագարան անուններով: Դրա նման կազմություններ են՝ քահանայատուն, երիցատուն, եպիսկոպոսարան, պատրիարքարան, մետրոպոլիտարան, ժամատուն, ինչպես՝ կալանատուն, կալվածատուն, ծառատուն բառերը:

2. Գլխավոր, ավագ սարկավագը կոչվել է **սարկավագապետ**:

3. Հովհաննես Իմաստասեր-Սարկավագի 1116 թ. սահմանած անշարժ տոմարը նրա անվամբ կոչվել է **Սարկավագադիր**: Նա ԺԱ-ԺԲ դարերում հայ դպրության, մշակույթի ամենանշանավոր կենտրոններից մեկի՝ Հաղպատի վանական համալիրի մեծահռչակ իմաստասեր, տոմարագետ, բանաստեղծ, մանկավարժներից էր: Նա թաղված է վանքի գերեզմանատանը: Տապանին հետնյալ մակագրությունն է. «Արձանս այս սեմական է Սոփեստոսի Սարկաւագին»:

4. Սարկավագի ծառայությունը կոչվել է **սարկավագություն**:

5. Եկեղեցում կին սպասավորողը **սարկավագուհին** է: Կանանց վանքի մայրապետը նույնպես կոչվել է սարկավագուհի:

6. **Սարկավագակից** են կոչվում ծառայակից, պաշտոնակից անձինք՝ միմյանց հետ սարկավագություն անող:

7. Եկեղեցական սպասավորությունը **սարկավագելն** է:

8. Սարկավագ անվամբ պատմության մեջ մնացել է նաև սուրբ Ստեփաննոս **Նախասարկավագը**, որը Քրիստոսի համար նահատակված առաջին անձն է, Աստծու հանդեպ մեր ունեցած սիրո եւ նվիրումի խորհրդանիշը: Նա դարձավ նախավկան Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդին լինելու ճշմարտության: Նրան կյանքի վերջին էջերը պատմված են Գործք Առաքելոցի 6-8-րդ գլուխներում: Նրա հետ ձեռնադրվել էին Փիլիպպոսը, Պրոքորոնը, Նիկանորան, Տիմոնան, Պարմենան եւ Նիկողայոսը, որոնց վրա դրվեցին հասարակաց սեղանները սպասավորելու, աղքատների ու կարիքավորների մասին հոգ տանելու պարտականությունները: Այս յոթ սարկավագները դարձան քրիստոնեական Եկեղեցու առաջին սպասավորները, որտեղից էլ բխում է սարկավագ բառի ստուգաբանությունը:

ՊԱՏՐԱՍՏԵՑ ՆԱՐԵԿ ԴՊԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

## ԱՐԱՐՈՂ ՁԵՌՔԵՐ. ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՎ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

«Մենք նոր սերնդին ենք թողնում սերը հայրենիքի նկատմամբ,
և ի՞նչը կարող է դա ավելի լավ արտահայտել, քան արվեստը»:
Մ. Սարյան

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ փետրվարի 24-ին տեղի ունեցավ Մայր Աթոռի Գանձատան և Գևորգյան հոգևոր ճեմարանի ձեռնարկած «Արարող ձեռքեր» խորագիրը կրող ցուցահանդեսային նախագծի երկրորդ միջոցառումը:

Նախագիծը, որ միտված է երիտասարդ ստեղծագործողներին ճանաչելի դարձնելուն և խրախուսելուն, իր երկրորդ ցուցադրությամբ մեզ է ներկայացնում քանդակագործ Գոռ Հովհաննիսյանի և գեղանկարչուհի Սյուզաննա Մկրտչյանի ստեղծագործությունները:

Արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը, բարիգալստյան խոսքում վերստին հիշեցնելով, որ Վեհափառ Հայրապետը 2018 թվականը հռչակել է երիտասարդական բազմապիսի միջոցառումների տարի, ասաց. «Հայոց Եկեղեցու կողմից մշակույթի և արվեստի բոլոր ճյուղերը ողջունելի են եղել և ընդունելի այնքանով, որքանով դրանք ծառայել են ազգի դաստիարակության ու լուսավորության գործին: Մեզանից յուրաքանչյուրն արվեստի ճանապարհով հաղորդ է դառնում արարման շնորհին: Այն նորը, որը ծառայում է հայ արվեստի ու մշակույթի որակական բարձրացմանը, Եկեղեցին ընդունում ու փայփայում է սիրով»:

Մայր Աթոռի ձեռնարկած այս նախաձեռնության մասին Գոռ Հովհաննիսյանին տեղեկացրել է մտերիմներից մեկը. «Ես շատ ուրախ եմ, որ մեր Առաքելական Եկեղեցին, - ասում է քանդակագործը, - այս կերպ իր վերաբերմունքն է ցույց տալիս մեզ, կարող ենք նաև ասել՝ սա մի տեսակ օրհնություն է երիտասարդ ստեղծագործողներիս համար: Նմանատիպ ձեռնարկումները մեզ համար շատ կարևոր են, որովհետև մենք այսօր Հայաստանում ցուցադրության խնդիր ունենք, իսկ Եկեղեցին այս նվիրական հարկի տակ այսօր այդ հնարավորությունը մեզ ընձեռել է, որի համար վերստին իմ շնորհակալությունն եմ հայտնում»:

Գոռ Հովհիհանիսյանն Արարատի մարզի Այգավան գյուղից է: 34-ամյա քանդակագործն արվեստի նկատմամբ սերն զգացել է դեռ դպրոցական տարիներից. կյանքի հենց այդ շրջափուլում որոշել է դառնալ քանդակագործ: Ընդունվել և ավարտել է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակագործության բաժինը, այնուհետև ծառայել է Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերում: Այսօր Գոռի համար կրկնակի տոն է, որովհետև այս օրը նաև նրա առաջին անհատական ցուցահանդեսն է: Ցուցահանդեսին ներկայացված են «Սրճարանում», «Արև և լուսին», «Երազ», «Կանացի ֆիգուր», «Թեյ խմողը», «Մայրը», «Արդարություն», «Ծաղրածուն օղերով» և ևս 20 բրոնզե, երկաթե, մետաղական, փայտե նյութերով արարված գործեր:

Գոռ Հովհաննիսյանը մասնակցել է հանրապետական ու խմբակային բազմաթիվ ցուցահանդեսների, իսկ արդեն գեղագիտական հայացքների ձևավորման գործում իր մեծ դերն է ունեցել իտալական Վերածննդի շրջանը. «Այդ դարաշրջանն ինձ համար չափազանց գեղեցիկ է և յուրօրինակ՝ հատկապես արվեստի բարձրարժեք գործերով: Բայց որքան էլ ազդված լինեմ, մեկ է, իմ վերաբերմունքն անպայման տալիս եմ նյութին: Ամեն նյութ իր պահանջն ու ձևն ունի աշխատելու: Ինձ ոգեշնչում են նաև մարդկային կերպարները: Հիմնականում կանայք: Նայե՛ք, ամեն քանդակ ինքն իր մասին խոսում է և պատմություն ունի պատմելու», - նշեց քանդակագործը:

Ընդհանրապես արվեստի բոլոր տեսակները ծառայում են արվեստներից մեծագույնին՝ երկրի վրա ապրելու արվեստին: Եվ ահա 23-ամյա Սյուզաննան, որը Վաղարշապատ քաղաքից է, երկրի վրա ապրելու արվեստի իր առաջին քայլերն սկսել է տակավին 10 տարեկանից: Սկզբում սովորել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում, որը, ինչպես նկարչուհին է նշում, «մեծ նշանակություն ունեցավ հետագա իր ստեղծագործական ճանապարհի համար», ցայս պահ ուսումնառում է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի գեղանկարչության բաժնում:

Ոճային և գունային առանձնահատուկ երանգներով տարբերվում են Սյուզաննայի դիմանկարները, բնանկարները և կոմպոզիցիոն աշխատանքները. «Փորձել եմ կտավներում արտահայտել զգացական ներաշխարհս: Գույների ընտրությունը պայմանավորված է թեմատիկայով: Կախված է նրանից, թե ինչ բովանդակության գործ եմ ստեղծում: Կարևորն այն է, որ ստեղծագործողն առաջնահերթ ուշադրություն սևեռի բովանդակությանը: Նույնիսկ փոքրիկ դետալը պետք է իր բացատրությունն ունենա: Նկարում չպետք է լինեն անբացատրելի երևույթներ», - մեկնաբանում է նկարչուհին:

Երիտասարդ Սյուզաննան, գեղանկարչությունն իր համար ինքնադրսևորման, զգացմունքների արտահայտման լավագույն ճանապարհ համարելով, իր արվեստում առանձնացնում է «Սուրբ Աշխեն թագուհի» գործը, որը, ի դեպ, Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում նրա դիպլոմային աշխատանքն է եղել. «Ընդհանրապես ինձ միշտապես հետաքրքրում են պատմական թեմատիկան և սրբապատկերները: Այս նկարում փորձել եմ կապ ստեղծել երկրի և երկնքի միջև, իսկ նկարի հրեշտակները, որոնք երկնքում են, տեսնում ենք, որ իջնելով ձուլվում են աշխարհիկ կյանքին: Այս գործը կարելի է համարել նաև դիմանկար. ես նկարել եմ իմ դեմքը՝ ինձ հայելու մեջ նայելով. ընդհանարպես, իմ արվեստում հաճախ բնորդուհին ինքս եմ»:

Իսկ արդեն «Սեր երկրային և երկնային» կտավում Սյուզաննան «փոխանցել է կնոջ և տղամարդու ներքին կապն ու փոխհարաբերությունը. կտավի վերնամասում կրկին հրեշտակներն են, որոնք հսկում են տեսարանը»:

Մովսես Կաղանկատվացին, արվեստը նմանեցնելով լույսի, նկատել է. «Նկարիչների արվեստը լույս է, քանզի թե՛ ծերերը, թե՛ մանուկները համահավասար դիտում են»: «Պատարագ», «Արարում», «Շարժում» և լույսի շուրջ 30 այլ երանգներ իր արվեստում արտացոլել է գեղանկարչուհին՝ շեշտելով հոգու մշտափոփոխ զգացողությունը:

**ՊԱՏՐԱՍՏԵՑ ԱՐՍԵՆ ԴՊԻՐ ՉԵՅՆԱԼՅԱՆԸ**

# БЕРЕГИТЕ МАТЬ

Мам плохих на свете не бывает,
Хоть это и не новость, господа,
К детям её любовь не умирает,
Как под утро дальняя звезда.

Она любит сердцем и душою
И прощает детям все грехи
И стоит с протянутой рукою,
Ждёт от них взаимной доброты.

Но дитя порой не замечает,
Как кристальна мамина душа,
И не с болью голос повышает,
Если мама в чём-то неправа.

Но и мать глядит не отвечая,
Как дитя бессовестно грубит,
И слезу платочком вытирая,
С болью в сердце, всё же промолчит.

Как обидно, когда наши дети
Горьким словом обижают мать,
От таких детей на белом свете
Матерям приходится страдать.

Кто хоть раз обидит маму,
Или причинит ей чем-то боль,
Я уверена, что и он увидит
От своих детей такую боль.

В этом мире всё идёт обратно
И любой поступок возвратим,
Нашим мамам будет так приятно,
Если их вниманьем окружим.

С ними прекрасным надо поделиться.
И при жизни ими наслаждаться,
Потому что слаще жизни мать.

Очень  жаль что матери не вечны,
Как большое солнце, как луна,
Но любовь у мамы бесконечна
И не умирает никогда.

Вы за мам молитесь днём и ночью,
Не давайте часто им страдать,
Берегите и цените маму,
Берегите и любите мать.

ՀԵՂԻՆԱԿ՝ ՋՈՒԼԻԵՏԱ ՇԻՐԱԿՅԱՆ (ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԾԵՐԱՆՈՑ)

ԿԱՊԵԼԱՆ՝ ԵՂԻՇԵ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ






## Հորիզոնական

1. Երկրորդականոն կամ ... Ավետարան
3. Հրեա պատմիչ
5. «Եռյակ միության» հակակշիռ ուժը
6. «Նոր Ուխտի» մարգարե
8. Պետություն Հրվ. Ամերկայի կենտրոնական մասում
9. Քաղաք, որ հայտնի է «Նոր Անգլիա» անունով
11. Պտղաբերության ծաղիկը
13. Քաղաք, որը կրում է «Օլիմպիական մայրաքաղաք» անունը
14. Հայ նկարիչ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ
17. Տիեզերական առաջին ժողովի վայրը
20. Իտալացի նշանավոր նկարիչ, քանդակագործ (19-20 դդ.)

## Ուղղահայաց

2. «Հայր Գորիո» վեպի հեղինակը
4. «Դավիթ » քանդակի հեղինակը
7. Տիեզերական երրորդ ժողովի վայրը
10. Շվեդ գիտնական, դինամիտը ստեղծողը
12. Իսրայելի պետական լեզուն
15. Արևմտյան Եվրոպայի հնագույն ժողովուրդը
16. Գերմանացի աթեիստ փիլիսոփա
18. Դավթի և Բերսաբեեի որդին
19. Սբ. Գրիգոր Լուսավորչի հայրը

Ֆեյսբուքում մեզ կարող եք հետևել այստեղ՝
www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ հետևյալ էլ. հասցեով՝
gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան
Հեռախոս՝ (010) 510 180